Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐԻ 2006թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Մեծ Սեպասարի նախորդ երկու տարիների պեղումներով բնակավայրի վաղ միջնադարյան կառույցների տակ բացվեցին մ.թ.ա. 28-26/24-րդ դարերով թվագրվող բնակավայրի շինարարական երկու հորիզոններից պահպանված սալահատակների և պատերի հատվածներ:[1]

2006թ. պեղումներն իրականացվեցին Project Discovry հիմնադրամի դրամաշնորհով: Ելնելով որոշակի խնդիրներից՝ պեղումները նախ շարունակվեցին բնակավայրի արդեն մասամբ պեղված հատվածներում, ապա պեղավայրն ընդարձակվեց դեպի հյուսիս և արևմուտք: Պեղավայրի արևմտյան հատվածում դրվեցին լրացուցիչ B-2, B-3, B-4 և B-5, հյուսիսայինում՝ C-2 և D-2 քառակուսիները:

Աշխատանքներն իրականացվեցին պեղավայրի կենտրոնական հատվածում՝ նախորդ տարիներին բացված միջնադարյան կառույցի առաջին (E-4, E-5) և երկրորդ սենյակներում (E-3):Առաջին սենյակում հեռացվեցին հարավային մաստաբայի մի մասը և հյուսիսային մաստաբան ամբողջությամբ: Պեղվեց նաև նույն սենյակում պահպանված վաղբրոնզիդարյան տալահատակի տակ:



[1] *Լ. Եգանյան, Մեծ Սեպասարի մ.թ.ա. III հազարամյակի բնակավայրը (2004-2005թթ. պեղումների նախնական արդյունքներ), ՀՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», VIII, Գյումրի, 2005, էջ 5-21:*

Նախորդ տարի բացված հարավային՝ առաջին սենյակը արևելք-արևմուտք ձգվածությամբ ուղղանկյուն սրահ է՝ հարավային և հյուսիսային պատերի երկայնքով դրված մաստաբաններով, որոնք վերաբերում են վաղմիջնադարյան կառույցի վերակառուցման փուլին: Սենյակի մեջ պահպանված մ.թ.ա. III հազարամյակին վերաբերող սալահատակը և վերջինիս վրա դրված պատը մտնում էին մաստաբայի տակ:

Հարավային սենյակի հյուսիսային պատի տակ դրված մաստաբան զբաղեցնում էր պատի արևմտյան կեսը և ավարտվում էր հյուսիս-արևմտյան անկյունում բացված մուտքի մոտ: Վաղբրոնզիդարյան կառույցից պահպանված սալահատակից 40սմ բարձր լինելով՝ մաստաբայի արևելյան կողմն ավարտվում էր նույն սալահատակին դրված քարերով: Հստակ էր, որ վերջինս մաստաբայից ավելի վաղ է, սակայն նաև համաժամանակյա չէ սալահատակին: Շարվածքի ինչ լինելը և ժամանակաշրջանը պարզելու համար անհրաժեշտ էր հեռացնել մաստաբան:

Մաստաբայի մակերեսից 30սմ խորության վրա բացվեց շատ վատ թրծված օջախ: Խեցեղենը խառն էր՝ հիմնականում մ.թ.ա. III հազարամյակին բնորոշ կարմիր աստառով և սև փայլուն արտաքինով տարբեր ամանների բեկորներ, դրանց հետ նաև՝ միջնադարյան բեկորներ: Մաստաբան հեռացնելիս բացվեց մ.թ.ա. III հազարամյակի սալահատակի վրա դրված հյուսիս-հարավ գնացող պատին զուգահեռ մի պատ ևս: Քարերի և սալերի խառը շարվածքով այս պատը մնացել է միջնադարյան կառույցի տակ, որի հյուսիսային պատը դրվել է անմիջապես վերջինիս վրա: Բացված պատի հատվածը վերաբերում է մ.թ.ա. III հազարամյակի կառույցի շինարարական երկրորդ փուլին և մի ամբողջություն է կազմել ստորին սալահատակից 30սմ հզորությամբ մշակութային շերտով տարանջատված երկրորդ սալահատակի հետ: Մաստաբան հեռացնելուց հետո արևմտյան մասում բացվեց նաև նույն կառույցի շինարարական առաջին փուլին վերաբերող, հյուսիս-հարավ ուղղությամբ և ստորին սալահատակի հետ մեկ ամբողջություն կազմող պատի (լայն. 1մ) շարունակությունը: Այսինքն՝ իրար զուգահեռ երկու պատերը տարաժամանակյա են:

Սենյակի կենտրոնում՝ վաղբրոնզիդարյան սալահատակի եզրից սկսվող հողե հատակի վրա՝ երկրորդ փուլին վերաբերող պատի տակ, բացվեց անկանոն, հսկա քարերի վրա դրված անոթի շուրթից իրան հատվածը կազմող բեկոր՝ ամրացված վատ թրծված կավի 4-5սմ շերտով: Կավանոթի բերանը դրվել է մայր հողի մեջ ցցված ժայռաբեկորի եզրին և քիչ բարձր է ստորին սալահատակից: Կավաշերտի հարթակի վրա գտնվեցին մանր եղջերավոր անասունի կողոսկրեր և այլ անոթների մի քանի բեկոր: Կավաշերտը շարունակվում և մտնում է պատի տակ: Այսինքն, շինարարական երկրորդ փուլին վերաբերող, մեկ մետր լայնությամբ, տարբեր մեծության քարերով և սալերով շարված, հողի և քարերի լիցքով պատը դրվել էր կառույցի շինարարական առաջին փուլին վերաբերող անոթ-կրակարանի վրա: Հետագայում վաղբրոնզիդարյան այս պատի վրա է դրվել վաղմիջնադարյան կառույցի պատը: Այսինքն, տվյալ փոքր հատվածում ունենք վաղբրոնզիդարյան երկու և վաղմիջնադարյան մի շերտ, որոնց հարաբերակցությունը պարզելու համար պատի մի հատվածը հեռացվեց: Պեղվող հատվածը մի կողմից սահման ուներ կավաշերտի մեջ դրված անոթ-կրակարանի շուրթը, մյուս կողմից՝ միջնադարյան պատը: Բացվեց հրաբխային խարամով և հողով տափանված հաստ հատակ՝ վաղբրոնզիդարյան ամանների բեկորներով: Ավելի վաղ շերտի առկայությունը պարզելու նպատակով պեղվեց նաև սալահատակի տակ: Նախ հեռացվեց սալահատակի մի մասը: Բացված փոսի մեջ գտնվեցին բարձր վզով և քիչ փքուն իրանով միջին բրոնզիդարյան երկու ամբողջական անոթ, սրանց կողքին՝ մ.թ.ա. III հազարամյակին բնորոշ կարմիր աստառով և սև արտաքինով կարասի բեկորներ, օրսիդիանից սրածայր գործիք, ինչպես նաև ոչխարի ճաճ և սրունքոսկր: Վաղբրոնզիդարյան կարասն իր տեղում է, իսկ միջինբրոնզիդարյան նյութերը այստեղ հայտնվել են հետագայում, երբ բնակավայրի անկումից հետո տարածքը հավանաբար վեր է ածվել դամբարանադաշտի և մ.թ.ա. III հազարամյակի շերտի մեջ իջեցվել է միջինբրոնզիդարյան թաղում: Թեև միայն հետագա պեղումներով կարելի է հաստատել ենթադրությունը, սակայն սրա օգտին են խոսում ինչպես մ.թ.ա. II հազարամյակին վերաբերող գտածոնները, այնպես էլ Մեծ Մեպասարի արևելյան հատվածի մակերեսին ուրվագծվող սալարկղները և «Դաբի սուրբ» մատուռի մեջ ներառված սալարկղային թաղումները, որոնցից

մեկի ձևը՝ երկու մեծ ծածկասալով ու կոթողով, բնորոշ է միջին բրոնզի ժամանակաշրջանին:

Որոշվեց հեռացնել նաև նույն սենյակի հարավային պատի տակ դրված մաստաբայի արևմտյան կեսը: Մաստաբայի շարվածքից երևում էր, որ արևմտյան հատվածը հետագայում է դրվել: Նույն հատվածում ընդհատված էր նաև հարավային պատը: 2005թ. սենյակի արևմտյան պատը բացելիս պարզվել էր, որ վերջինս, հասնելով մաստաբային, ավարտվում է: Պեղվել էր նաև արևմտյան պատին կից քառակուսին, սակայն նշված պատը չհայտնաբերվեց: Անհրաժեշտ էր պարզել նաև մաստաբայի տակ մնացած մ.թ.ա. III հազարամյակի սալահատակի և համաժամանակյա հյուսիս-հարավ պատի շարունակելի լինելը, ինչպես նաև սենյակի հարավային պատի թերի լինելու պատճառը:

Առաջին շերտից գտնվեց աղորիք և ծակոտկեն բազալտից կոտք: Այս իրերը գտնվեցին կոպիտ, խաչվող գծերով նախշազարդված սալի բեկորների հետ, որոնք մնացել են արևմտյան պատի փլվածքի տակ: Մաստաբան 20 սմ իջնելուց հետո բացվեց մեկ այլ սալ, որից պահպանված աղեղնաձև հատվածը թիկունքից ամրացված էր քարերի շարվածքով: Բացվեց նաև սենյակի արևմտյան պատի շարունակությունը, որի վերին շարքերի քարերը փլվել էին օջախի վրա: Սենյակի հարավային պատի արևմտյան հատվածի բացակայությունը ենթադրում է, որ պատը կարող էր ավելի խոր դրված լինել: Այս պատը նաև պեղավայրի հարավային եզրն է, և պեղավայրի հետագա ընդարձակմամբ միայն հնարավոր կլինի պարզել պատի բացակայության պատճառը:

Հարավային պատի տակ դրված մաստաբան հեռացնելուց հետո բացվեց մ.թ.ա. III հազարամյակի կառույցի առաջին հորիզոնին վերաբերող պատի շարունակությունը՝ հարավ-արևմտյան անկյունով: Այսինքն՝ կառույցը քառակուսի կամ ուղղանկյուն է եղել, և բացվածը նրա արևմտյան պատն է:

Այսպիսով, հարավային սենյակի պեղումներով հստակեցվեց, որ պահպանված ստորին սալահատակը և նրա վրայով գնացող պատը համաժամանակյա են և վերաբերում են բնակավայրի շինարարական առաջին փուլին:Նույն փուլին է վերաբերում նաև տափանված անոթ-կրակարանը, իսկ վերջինիս վրա դրված պատը կապվում է արևելյան պատի տակ պահպանված երկրորդ սալահատակի հետ և վերաբերում է վերակառուցման փուլին: Իսկ սալահատակի տակ բացվածը միջինբրոնզիդարյան շերտի փաստումն է:

Պեղավայրի կենտրոնական հատվածում շարունակվեցին նաև հյուսիսային կամ երկրորդ սենյակի պեղումները (E-3): Նախ բացվեցին հյուսիս արևմուտք-հարավ արևելք թեքվածությամբ միջանցքի պատերը: Պատերից արևմտյանն անկյուն տալով շարունակվում և միանում է հյուսիսային կամ երկրորդ սենյակի հյուսիսային պատին: Հյուսիսային սենյակի արևմտյան պատը նստած է վաղբրոնզիդարյան սալահատակին դրված հյուսիս-հարավ պատի մնացորդների վրա: Նույն սենյակի արևելյան հատվածում՝ նույնպես սալահատակի վրա, պահպանվել է հյուսիս-հարավ պատ, որի վրա նստած 50սմ հզորությամբ մշակութային շերտին հաջորդում է վաղմիջնադարյան պատը: Քանի որ հյուսիսային և հարավային երկու սենյակները բաժանված են նույն պատով և սալահատակներն էլ մնացել են վաղմիջնադարյան նույն պատի տակ, կարելի է ենթադրել, որ դա նույն սալահատակն է: Բաժանարար պատի արտաքին մակերեսին ընթերցվում են իրար զուգահեռ երկու շարվածք և երրորդը, որ հետագա վերակառուցման ժամանակ արված հավելում է (E-3, E-4): Պատն ունի 5,7մ երկարություն և 3,5մ լայնություն արևելյան եզրին, իսկ արևմտյանում՝ 1,8մ: Պատի երկու ծայրերի չափերի տարբերությունը պայմանավորված է հավելյալ պատի անհամաչափ շարվածքով: Նախնական պատն ունի 1մ լայնություն: Հետագա հավելաշարն արևելյան եզրից սկսվում է 2,5մ և արևմտյանում ավարտվում 80սմ լայնությամբ: Պատը լրացվել է ամրացման նպատակով և անհամաչափ շարվածքի արդյունքը կենտրոնի լայն փքվածքն է:Վաղմիջնադարյան կցակառույցի որակը տնտեսական և սոցիալական վիճակի վկայություն է:

Հյուսիսային հատվածում պեղվեցին հավելված կից երեք քառակուսիներ (C-2, D-2 և E-2): Լրացված հատվածն ավարտվում է սարի գագաթի հյուսիսային եզրին, ուր ուրվագծվում էին պատի հետքերը: Ներառվեց նաև նշված պատը: Ինչպես պեղավայրի

ողջ տարածքում, այստեղ ևս հեռացված ճիմի տակ արդեն փլվածքների խառնիխուռն թափված քարեր են՝ խառնված վաղբրոնզիդարյան և վաղմիջնադարյան խեցեղենի հարյուրավոր բեկորների հետ: Խեցեղենի մեջ կան նախորդ տարիներին գտնված անոթների բեկորներ: Հավելված հատվածի պեղումներով (Ե-2) բացվեցին արդեն պեղված կառույցներն ամբողջացնող պատեր: Այսպես, հյուսիսարևելյան մասում բացվեց հյուսիսային կամ երկրորդ սենյակի հյուսիսային պատը, որի լայնությունը արևելքում 2,30մ է, արևմուտքում՝ 1,60մ: Պատն երկու անգամ լրացվել է 40-ական սմ լայնությամբ մեկական պատով: Հետագա երկու վերակառուցումների ժամանակ հավելված պատը դրվել է կառույցի հյուսիսային պատի տակ կուտակված 30-70սմ հզորությամբ կավի շերտի վրա: Կավի շերտի միջից դուրս եկան շարժական մի քանի օջախների բեկորներ: Արևմտյան նախնական պատը ի տարբերություն հյուսիսային հավելվածի, ավելի բարձր է, դրված է ժայռի վրա և ունի 1,60սմ հզորություն: Սենյակն ամբողջությամբ բացված չէ, քանի որ վաղմիջնադարյան պատերը նստած են վաղբրոնզիդարյան կառույցի վրա: Բացված հատվածներում հստակ են այս սենյակի վաղ բրոնզին վերաբերող հյուսիսային և արևմտյան պատերի որոշ հատվածներ և սալահատակի մի մասը: Պայմանավորված տեղանքով՝ այս և պատկից երկու սենյակների սալահատակների բարձրությունները տարբեր են: Առաջինի սալահատակը պատկից սենյակների սալահատակից 67սմ բարձր է: Բացի խեցեղենից, այստեղից գտնվեցին նաև փայտի և օքսիդիանից դանակի կտորներ, իսկ սալահատակի տակ ստուգումները ցույց տվեցին, որ այս կառույցը նստած է մ.թ.ա. III հազարամյակի մշակութային շերտի վրա, այսինքն՝ վերաբերում է վաղբրոնզիդարյան կառույցի շինարարական երկրորդ փուլին:

Պեղվեց նաև բնակավայրի հյուսիսային հավելվածի արևմտյան թևը (C-2, D-2): Կառույցների մնացորդները ծածկված են փլված քարերի խառնակույտով: Վերին շերտից հայտնաբերված նյութերը խառն են՝ և վաղմիջնադարյան, և վաղբրոնզիդարյան: Այս հատվածում թեև միջնադարյան կառույցներ չեն պահպանվել, սակայն գտածոների մեջ միջնադարյան նյութերի առկայությունը ենթադրում է, որ փլվածքները կարող են վերաբերել նաև տվյալ ժամանակաշրջանին: Բացվեց երկրորդ սենյակի հյուսիսային պատի շարունակությունը: Այս պատի հյուսիս-արևմտյան անկյունից սկսվում է մի փոքր կառույցի արևմտյան պատը: Վերջինս դրվել է ավելի վաղ կառույցի հյուսիս-հարավ պատի վրա: Կառույցը փոքր է (երկարությունը՝ 1,8մ, լայնությունը՝ 1մ): Հյուսիսային հատվածի փլվածքի մեջ գտնվեց ոլորուն բրոնզալարից ապարանջանի բեկոր: Այս կառույցի մեջ բացվեց մոխրի շերտով տափանված երկու հատակ, որտեղից գտնված նյութերը հիմնականում սև փայլեցված արտաքինով խեցեղենի բեկորներ են: Առաջին հատակին, 60սմ խորության վրա, սև փայլեցված քասի և նմանատիպ այլ անոթների բեկորների հետ գտնվեց նաև ոսկորից, մի ծայրը նեղ և տափակ գործիք: Մշակութային շերտի երկու հորիզոններից գտնվեցին կայծքարից մի քանի ներդիր և կոճակ: Հյուսիս-արևելյան անկյունում, 1,60մ խորության վրա գտնվեց բրոնզի թիթեղից ինչ-որ իրի՝ ծայրերն իրար սեղմված, տանձաձև մաս: Նույն խորությունից գտնվեց նաև կավից գդալի բեռան, որի պոչը գտնվել է առաջին հատակի նյութերի հետ: Այս հատվածի պեղումներից գտնվեցին շարժական օջախների բազմաթիվ բեկորներ և եռանկյունաձև պատվանդանների քսանից ավելի հենակներ: Հողի, մոխիրի և վատ թրծված կավի փշրանքներով հագեցած շերտերում բեկորային խեցեղենի՝ հատկապես շարժական օջախների և եռանկյունաձև պատվանդանների հենակների առատությունը, ինչպես նաև կառույցների բացակայությունը (այստեղ սրբարանին կից նեղ միջանցքի հյուսիսային պատի արտաքին կողմն է և տեղանքի բնական իջվածքի պատճառով նշված պատից ցածր է 2,5մ) ենթադրում են, որ այստեղ աղբ է լցվել:

Բնակավայրի կառուցապատման ժամանակ հաշվի է առնվել տեղանքի դիրքը, և համալիրը կառուցվել է հարթակներով:Պեղավայրի այս հատվածը կենտրոնում բացված նեղ միջանցքի հյուսիսային պատի հակառակ կողմում է (D-3): Նշված պատը փլվելիս՝ քարերը լցվել են 1,5մ խորությամբ բնական իջվածքի վրա դրված մեկ այլ պատի վրա, որը նույնպես փլված է: Խառնվել են նույն ժամանակի վերաբերող տարբեր կառույցների փլվածքները: Տեղանքի թեքության պատճառով վերին հարթակի պատերը փլվելիս թափվել են ստորին հարթակի կառույցների վրա: Հավանաբար դրա հետևանքով փլվել են նաև ստորին հարթակի կառույցները:

Փլվածքների տակ բացվեց խոշոր քարերով կիսաշրջանաձև շարվածք՝ հյված երրորդ սենյակի արևմտյան պատի հիմքին (D-3): Կիսաշրջանաձև շարվածքի վրա գտնվեցին նավաձև աղորիք և քարից փոքր, անավարտ կուռք (տախտ.V, նկ. 10): Շրջանաձև կառույցից պահպանված երկու շարքով արևելյան կիսաշրջանը վերաբերում է վաղբրոնզիդարյան բնակավայրի շինարարական երկրորդ փուլին: 40սմ հզորությամբ, մոխրով և հարդախառն հողով տափանված հատակով շերտի գտածոները խեցեղենի հարյուրավոր բեկորներ են: Ինչպես ցույց տվեցին հետագա պեղումները, կիսաշրջանաձև շարվածքը նստած էր մայր հողին դրված բնակավայրի շինարարական առաջին հորիզոնի պատի վրա:

Կիսաշրջանաձև շարվածքի տակ բացվեց վաղբրոնզիդարյան լայն պատը (հյուսիս-հարավ, դեպի արևելք քիչ թեքությամբ), որը շարելով, հասել են բնական ժայռին և այն ներառել պատի մեջ: Պատի լայնությունը 1մ է, բարձրությունը՝ 50սմ: Հարավային կողմում ևս ժայռն ուղիղ է և արևելյան անկյունում միանում է պատին:Այսինքն՝ բնական ժայռերն օգտագործելով և կից պատ շարելով ստացել են կառույցի արևելյան և հարավային պատերը: Արևելյան պատը հյուսիսարևմտյան անկյունում միանում է հյուսիսային պատին, որից բացվեց ընդամենը երեք քար: Արդյոք շարունակվում է այս պատը, թե՝ ոչ, կպարզվի հետագա պեղումներով:

Ճեղքված բազալտի մեծ, մոտավոր ուղղանկյուն քարերի շարվածքով արևելյան պատը բացելիս հատակին՝ մայր հողի՝ վրա բացվեց պատից քիչ հեռու, միջին մեծության քարերով շարված օջախ: Պատին զուգահեռ շարված օջախի քարերը հյուսիսային կողմում պատից քիչ ավելի հեռու են: Շարվածքի նման թեքությունը հնարավորություն է տվել տարբեր չափերի ամաններ դնել կրակին: Ֆջախի հատակը շարված է մանր քարերով: Հաստ մոխրաշերտի վրա վատ թրծված և փշրված կավի շերտ է: Մոխրաշերտից գտնվեցին վառված ոսկորներ, իսկ կավի շերտից՝ հենակներ: Ֆջախի կողքին գտնվեցին իլիկի գլուխ, խեցիներ, քարից կացնի և փոքր, նավաձև աղորիքի բեկորներ: Ֆջախի հարավային եզրից քիչ հեռու պատի հիմքի և ժայռի բնական իջվածքը լցված էր մոխրի հաստ շերտով, որտեղից գտնվեցին մի քանի խեցի և քարից իր՝ նման հենակի ոտքի:

Բացվեց նաև այս պատի դրսի կողմը, որ հարում է երրորդ սենյակի արևմտյան պատի տակ կուտակված կավի շերտին: Կավի շերտը բլրաձև լցված է մանր քարերի շարվածքով հատակին: Այս հատակի վրա, կավից ազատ հատվածում բերանքսիվայր դիրքով դրված կեղծ ունկով ամանի բեկորի տակ գտնվեցին տափակ բլթակի վրա միջանցիկ անցքով ոսկրե երկու ասեղներ: Նույն շերտից գտնվեցին խոյագլուխ օջախի հենակ, ձվածիր, տափակ ուլունք, իլիկի գլուխ և օրսիդիանի ցլեպ: Կավի շերտում գտնված վաղբրոնզիդարյան ուշ փուլի խեցեղենի հետ գտնվեցին նաև ավելի վաղ փուլի կարմիր աստառով և արտաքինով բեկորներ:

Նշված պատերի մեջ ներառված կառույցն ունի դեպի հյուսիսային լանջ բնական թեքությամբ իջնող դիրք: Կառույցի արևմտյան հատվածում 60սմ հզորությամբ վաղբրոնզիդարյան մշակութային երկու շերտերը բաժանված են մանր քարերով շարված, ապա տափանված մոխրախառն հատակով: Հատակի վրա գտնվեցին վաղբրոնզիդարյան խեցեղենի բեկորներ, որոնց հետ նաև ծեծիչ, օրսիդիանի ցլեպ, նավաձև աղորիքի բեկոր, նաև շարժական օջախի շրջանաձև հիմքով լայն ոտք և խոշոր եղջերավոր անասունի եղջյուր: Տափանված հատակի տակ՝ մայր հողի վրա գտնված խեցեղենի մի քանի բեկորներ ունեն մուգ շագանակագույն արտաքին և աստառ, որ բնորոշ է վաղ բրոնզի դարաշրջանի առաջին փուլին: Արևելյան պատի հակառակ կողմում՝ կավաշերտի մեջ ևս գտնվեցին նման մի քանի բեկոր, որ կարող են նաև կավի հետ բերված լինել: Սակայն այստեղ կավի շերտից ներքև նույնպես մանր քարերով շարված հատակի տակ վաղբրոնզիդարյան վերջին փուլի խեցեղենի հետ գտնված շագանակագույն արտաքինով և աստառով խեցեղենի մի քանի բեկորը վկայում են ավելի վաղ նյութի առկայությունը, սակայն շերտ դեռևս փաստված չէ:

Պեղվեցին նաև հնավայրի արևմտյան եզրի երկարությամբ հավելված հատվածում դրված քառակուսիները:Այս հատվածում նպատակ ունենք բացել հարավային սենյակի արևմտյան պատի դրսի երեսը, որ հարում էր դեռևս 2004թ. բացված կլոր կացարանին: Դրանով հնարավորություն կունենայինք կապել երկու հատվածները, հաս-

կանալ վաղմիջնադարյան կառույցի հարավային սենյակի մեջ բացված վաղբրոնզի-դարյան պատի և կլոր կացարանի հարաբերակցությունը: Ընդարձակվող տարածքի մեջ ներառնվելու էր նաև նախորդ երկու տարիներին բացված, սակայն դեռևս չամբողջացած սրբարանը: Վերջինիս վրա նստած միջնադարյան կառույցից դեպի արևմուտք պեղումով կբացվեին նաև կլոր կացարանի և սրբարանի միջև ընկած հատվածները, ինչը հնարավորություն կտար պարզել երկու կառույցների ժամանակագրական և գործառութային կապը:

Դրված քառակուսիները պեղավայրի այս հատվածը բաժանեցին երկու մասի՝ հարավային և հյուսիսային: Նախ պեղվեց հարավային հատվածը (C-4 և C-5): C-4 քառակուսու մի եզրը երկար միջանցքի հյուսիսային պատն է: Տեղանքի թեքության պատճառով կառույցները տարբեր հարթակների վրա են: Այստեղ երկու հարթակների տարբերությունը 2,5մ է, և փլվածքի հետևանքով վերին կառույցի քարերը թափվել ու ծածկել են ավելի ցածրում գտնվող կառույցները:

Սկսեցինք պեղել հարավային սենյակի արևմտյան պատի շարունակությունը կազմող թումբը (C-5), որն իջնում և ավարտվում է կլոր սենյակի մեջ (D-5): Արևմտյան պատը հարավային հատվածում ընդհատվում է: Գտնված հիմնական նյութը մ.թ.ա. III հազարամյակի է, կան նաև միջնադարյան խեցեղենի՝ դեղին, մանր գծազարդ բեկորներ:

Կլոր կացարանի հարավային մասում բացվեց պատ: Պեղվեց նաև կացարանի վրա դրված վաղմիջնադարյան կառույցի արևելյան մասում նախորդ տարի բացված պատի շարունակությունը: Պեղվեց հարավարևելյան անկյունը, բացվեց հարավային պատին զուգահեռ մեկ այլ պատ: Բացվեցին նաև կլոր կացարանի վրա վաղմիջնադարյան կառույցի արևելյան պատից պահպանված մի քանի շարքերը և նրան կից մաստաբան:Տարբեր հորիզոնների վրա պահպանվել են երկու սալահատակներ, որոնք վերաբերում են վաղ միջնադարում կատարված երկու վերակառուցումների: Առաջին սալահատակի մակարդակից գտնված իրերը խոհանոցային կոպիտ խեցեղենի խառը բեկորներ են, որոնց մեծ մասը՝ մ.թ.ա. III հազարամյակին բնորոշ: Գտածոների մեջ կան նաև միջնադարյան խեցեղենի բեկորներ և ոսկրից գործիք: Միջնադարյան պատերի հատվածից գտնվեց երկու միջանցիկ անցք ունեցող ոսկրե կոթով դանակի, ճան, ինչպես նաև՝ խոշոր եղջերավոր անասունի կողոսկրից քերիչ: Երկրորդ սալահատակը համապատասխանում է արևելյան պատի տակ դրված մաստաբային:

Հարավային սենյակի մեջ (D-4) նախորդ տարի բացված և արևմտյան պատի շարունակությունը կազմող՝ կլորացող անկյուններով, անհամաչափ (2,5-2,8 մ) լայնությամբ հաստ պատի արևմտյան երեսը բացվում է կլոր կացարանի վրա միջնադարում կառուցված սենյակի մեջ, ապա նույն ձևով շարունակվում դեպի արևմուտք և հյուսիս-արևելյան անկյունում միանում միջնադարյան կառույցի արևելյան պատին: Այստեղ կացարանի մուտքն է, որ բացվում է մի միջանցքի մեջ՝ ունենալով մի կողմից օջախով սենյակի հարավային պատը, մյուս կողմից՝ կլորացող պատը: Մուտքի մոտ՝ մ.թ.ա. III հազարամյակի հատակին գտնվեցին կտցաձև ունկով անոթի բեկորներ:

Վաղմիջնադարյան սենյակի (C-5) արևմտյան պատը նույնպես մեկ շարքով է շարված, իսկ պատի ետևում ճեղքված քարերի լիցք է: Կարելի էր կարծել, թե կառույցները այստեղ ավարտվում են, և շինարարության ժամանակ օգտագործված քարերի թափոնը թողնվել է տեղում: Սակայն պեղավայրի հարավային եզրին, 40սմ խորության վրա բացվեց մայր հողի վրա դրված տափակ սալերով շարված պատ, որ շարունակվում է արևմուտք: Այստեղ պեղավայրի արևմտյան սահմանն է, և միայն պեղման տարածքի ընդարձակմամբ հնարավոր կլինի պարզել պատի երկարությունն ու կապն այս կառույցների հետ: Այս հատվածի վերին շերտի նյութերի մեջ կան նավաձև աղորիքի բեկոր, գնդաձև ունկ, օջախի բեկորներ, մ.թ.ա. III հազարամյակի նախշազարդ բեկորներ, միջնադարյան խեցեղենի բեկորներ (դեղնավուն, սանրաքաշ հիշեցնող գծազարդ, նախշով): Պատի հիմքի մոտ գտնվեցին ողորկ մակերեսով, սեղմված գնդի ձև ունեցող երկու կոկիչներ:

Պեղավայրի արևմտյան կողմում (C-4) հավելված հատվածի պեղումների ժամանակ բացվեց նախորդ տարի պեղված սրբարանի արևմտյան կեսը՝ արևմտյան և հյուսիսային պատերով: Արևմտյան պատի (լայն.՝ 73սմ) վրա սրբարանի մուտքն է

(բացվածքը՝ 60սմ): Պատի շարունակությունը մնացել է վաղմիջնադարյան պատի տակ: Բացվեց նաև սրբարանի հյուսիսային պատը, որ կից է միջանցքին: Սակայն պատի երկու կողմերի շարվածքների տարբերությունը ենթադրում է, որ իրար հպված տարբեր պատեր են: Միջանցքի պատի շարվածքը մեծ, անկանոն քարերով է, իսկ սրբարանինը՝ միաչափ և միջին մեծության: Սրբարանի այս պատը հավանաբար միանում է 2005թ. բացված կավածեփ հատակի արևելյան եզրի վրա դրված միջնադարյան պատի տորին հատվածում պահպանված նույնատիպ շարվածքով պատին, որն ըստ ամենայնի, սրբարանի արևելյան պատն է, քանի որ և՛ պատերի շարվածքներն են նույնը, և՛ նույն հատակի վրա են դրված: Իսկ վերջնական կճշգրտումը հնարավոր է միայն հետագա պեղումներով: Միջնադարյան կառույցի արևմտյան պատի հիմքի տակ՝ վաղբրոնզիդարյան սրբարանի կավածեփ հատակից15սմ վերև, բացվեց հաստ մոխրաշերտ՝ փայտածխի կտորներով: Նույն տեղից գտնվեց փոքր հաղց (տախտ. III, նկ.7): Իսկ կավածեփ հատակին բացվեցին զոհաբերված վեց գայլերի գանգեր՝ առանց ներքին ծնոտների: Զոհաբերությունների կողքին գտնվեցին կարմիր աստառով և սև, փայլեցված արտաքինով տարբեր ամանների բեկորներ, իսկ գանգերից ոչ հեռու, արևմտյան պատին կիպ դրված՝ մեծ աղորիք: 2004 թ. սրբարանի արևելյան հատվածի պեղումների ժամանակ հատակի տարբեր մասերում գտնված գայլերի ծնոտներն անշուշտ այս գանգերինն են: Զոհաբերությունից 60սմ հեռու՝ սրբարանի հյուսիսային պատի տակ, կավածեփ հատակին, ընդգծվում էր շրջանաձև սև հետք: Բացվեց մոխրախառն հողով լցված, ոչ խորը (15սմ) փոքր փոս, որտեղից գտնվեցին խեցիներ, դացիտից և վանակատից պալեոլիթյան արտեֆակտեր և վաղբրոնզիդարյան պատվանդանի հենակ: Գտածոները զոհաբերություններից ավելի վաղ են:

Հնավայրի վաղբրոնզիդարյան շերտն այս կամ այն չափով պահպանվել է պեղված բոլոր կառույցների տորին մասերում: Այս շերտն առնված է երկու սահմանների մեջ: Ստորինը հրաբխային ծագմամբ կարմիր ավազաքարային մայր հողն է, իսկ վերին սահմանը՝ վաղմիջնադարյան կառուցների հիմնապատերին հասնող 60սմ հաստությամբ շերտը, որի տակ էլ մնացել են վաղբրոնզիդարյան կառույցների պատերի մնացորդները: Շերտի խորությունը տարբեր տեղերում տատանվում է 50-60սմ և 1,50-1,70մ միջև, իսկ հզորությունը՝ 40-50սմ: Փաստված են ավերման և վերաշինման հետքեր: Բացվել են պատերի մնացորդներ, որոնք սակայն մինչ այժմ հատակագծային որևէ ավարտուն պատկեր չեն տալիս: Սրբարանի հատակին դրված միջնադարյան կառույցի պատերը, ինչպես նաև սրբարանի արևմտյան և արևելյան պատերի որոշ հատվածների հետ դրանց հատումը թույլ չեն տալիս հատակագծային որոշակի պատկեր ունենալ: Սրբարանում զոհաբերված գայլերի վեց գանգերի առկայությունը վկայում է ծիսակարգի հնդեվրոպական հնագույն հավատալիքների և պաշտամունքի արմատներ ունենալը և այս մշակույթը կրող ցեղերի էթնիկ պատկանելիությունը պարզելու համար կարևոր փաստ է:

Մեծ Սեպասարի 2006թ. գտածոների մեծ մասը մ.թ.ա. III հազարամյակին բնորոշ վարդագույն աստառով և սև, փայլեցված արտաքինով ծիսական և խոհանոցային բեկորային խեցեղեն է: Խեցեղենի մեջ կան նաև վաղ բրոնզի առաջին փուլին վերաբերող շագանակագույն արտաքինով և աստառով մի քանի բեկորներ, որոնք գտնվեցին լցված կավի շերտի մեջ, ինչպես նաև պեղավայրի հյուսիսային եզրագծի ստորին մասում՝ մայր հողի վրա, ուշ փուլի նյութերի հետ: Խեցեղենի մեջ կան միջին բրոնզին վերաբերող երկու անոթների, ինչպես նաև՝ վաղմիջնադարյան բազմաթիվ բեկորներ:

Մ.թ.ա. III հազարամյակի խեցեղենը հիմնականում նույնն է, ինչ նախորդ տարիների գտածոները: 2006թ. գտածոների մեջ կան նաև խոյագլուխ և ֆալիկավոր պայտաձև շարժական օջախների բեկորներ: Շարժական օջախներից մեկը պայտաձև է՝ լայն ժապավենաձև աղեղի արտաքին երեսի կենտրոնում կիսագնդաձև ունկով: Ե՛վ կենտրոնի, և՛ ծայրերի հենակները ֆալիկավոր են: Աղեղի ներսի կողմից, յուրաքանչյուր հենակի դիմաց մեկական փոքր ելուստ է՝ ամանը պահելու համար (տախտ. II, նկ.1): Գտնվեցին նման շարժական օջախների մի քանի այլ հենակներ ևս (տախտ.II, նկ. 3,4), որոնցից մեկի ֆալիկաձև վերջույթը խոյակերպ է (տախտ. II, նկ. 2), իսկ մյուսի հենակը խոյագլուխ է (տախտ. II., նկ. 5): Բազմաթիվ են եռոտանի պատվանդանների

հենակները: Գտածոների մեջ կա նաև կավից կոպիտ, լայն, տափակ բերանով և կլորավուն պռչով գդալ (տախտ. III, նկ. 2):

ՏԱԽՏԱԿ 1



Աշխատանքային գործիքները քարից են և ոսկրից:Գտնվեցին բազալտից աղոթիքներ, կոկիչներ, ծեծիչ (տախտ. IV, նկ. 2), կացին (տախտ. IV,նկ. 3), կայծքարից ներդիրներ (տախտ. IV, նկ. 5-11) և անիվ (տախտ. III, նկ. 5), դացիտից արտեֆակտեր: Քարե իրերի մեջ կա նաև կայծքարից կոճակ (տախտ. V, նկ. 4) և երկու ուլունք. մեկը՝ ձվածիր, մյուսը՝ օղակաձև (տախտակ V, նկ. 5, 6):

Ոսկրե իրերի մեջ կան իլիկի գլուխ (տախտ. III, նկ. 4), ասեղներ (տախտ. V, նկ. 2,3), ինչպես նաև ծակող գործիքներ (տախտ. V, նկ. 1, տախտ. III, նկ. 3), իսկ հոկված և տափակ ծայրով գործիքը կարող էր օգտագործվել կավե փոքր իրերի նուրբ անցումները հարթելու և կոկելու համար (տախտ. V, նկ. 7): Ոսկրից գտածոների մեջ կա թիակոսկրից անավարտ գործիք: Եզրին արված համաչափ ատամնավոր փորվածքները և խազվածքի հետքերը ենթադրում են, որ պատրաստվելիք իրը կարող էր լինել սանր (տախտ. IV, նկ. 4): Գտնվեց նաև կիսամշակ եղջյուր՝ տաշվածքի և կտրվածքի հետքերով (տախտ. IV, նկ. 1):

Բրոնզյա իրերից գտնվել են ոլորուն ապարանջանի մի բեկոր (տախտ. V, նկ. 9) և բրոնզի թիթեղից ինչ-որ իրի մաս (տախտ. V, նկ. 8):

Բազմաթիվ են վանակատի ցլեպները և բացառված չէ, որ այս գտածոները կամի քարեր են: Սարի տակ աղբյուրների առատությունը, տարածքով հոսող Ախուրյան գետը, ինչպես նաև մերձակա դաշտավայրի հարուստ հողատարածքները նախադրյալներ էին հացահատիկի մշակության համար: Մանգաղների ներդիրների գյուտերը և դրանց կողքին վանակատի ցլեպների առատությունը ենթադրում են, որ Մեծ Մեպասարում հացահատիկը կալսելու համար կարող էին օգտագործել կամը: Վանակատից մի ծակիչ գտնվեց տալահատակի տակ (տախտ. III, նկ. 1)՝ վաղբրոնզիդարյան կարասի բեկորների և միջինբրոնզիդարյան անոթների հետ:

Միջինբրոնզիդարյան նյութը ներկայանում է երկու անոթով: Շագանակագույն արտաքինով, քիչ փքուն իրանով, նեղացող վզով և ուղիղ շուրթով անոթ վզի տակ թեք գծերի խազերով, իրար հակադիր եռանկյունիների երկշարք նախշ է (տախտ.I, նկ. 2): Երկրորդ անոթն ավելի մեծ է, սև, ունի բարձր, փքուն իրան, կարճ վիզ, շուրթն ուղիղ է՝ քիչ դուրս թեքված կտրվածքով (տախտ. I, նկ. 1): Այս գտածոներն իրենց զուգահեռներն ունեն Հառիճի թիվ 4, 29 և 108 դամբարանների[2] և Շիրակի մեկ այլ համաժամանակյա հուշարձանի՝ Արեգնադեմում դիպվածաբար բացված դամբարանի նյութերում:

Վաղմիջնադարյան նյութերի հիմնական մասը բեկորային խոհանոցային խեցեղեն է՝ անզարդ: Գտածոների մեջ կան դեղնավուն, մանրահատիկ կավից ալիքաձև և խազավոր նախշազարդ բեկորներ:Միջնադարյան գտածոների մեջ կա կավից, մի ծայրը քիչ թերի, պնեղաձև ձիթաճրագ (տախտ. III, նկ. 2) և եռանկյունաձև, սրածայր շեղբով երկաթյա դանակ (տախտ. III, նկ. 8):

---

[2] *Т. Хачатрян, Древняя культура Ширака, Ер., 1975, рис.46, 60, 62.*

ՏԱԽՏԱԿ 2









ՏԱԽՏԱԿ 3



ՏԱԽՏԱԿ 4



ՏԱԽՏԱԿ 5



Մեծ Սեպասարի 2006թ. պեղումներով կուտակվեց նաև մեծ քանակությամբ ոսկրաբանական նյութ, որը կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբում ընտանի կենդանիների ոսկորներն են, որ դատելով գտածոների քանակից, ոչ մեծ հոտ է և բնակչության տնտեսության հիմքը (ձի, կով, ցուլ, ոչխար, այծ, խոզ): Ցուլի ոսկորների մաշվածությունը ցույց է տալիս, որ տնտեսության մեջ օգտագործվել է քարշող անասունի ուժը: Երկրորդ խմբում վայրի կենդանիների ոսկորներն են (կզաքիս և գայլ ...): Գտածոների մեջ կան նաև շան ոսկորներ: Ոսկրաբանական նյութի մեջ առանձնապես կարևոր է զոհաբերված գայլերի ոսկորները: Ենթադրվում է, որ ծեսը կատարողները հնդեվրոպական ցեղեր էին, քանի որ ըստ լեզվաբանական ուսումնասիրությունների, զոհաբերման նման ծեսը հատուկ էր տվյալ լեզվախմբի նախնական ցեղերին:[3]

Այսպիսով, Մեծ Սեպասարի 2006թ. պեղումներով ի հայտ եկան մ.թ.ա. 28-26/24 դդ. թվագրվող վաղբրոնզիդարյան հնավայրում[4] բացված սրբարանի արևմտյան և հյուսիսային պատերը, կլոր կացարանի վրա դրված վաղ միջնադարյան կառույցից պահպանված հատվածները, հստակեցվեց կլոր կացարանը և սրբարանը միասնող միջանցքը, ճշգրտվեց վաղմիջնադարյան կառույցի հարավային և հյուսիսային սենյակների տակ մնացած վաղբրոնզիդարյան պատերի և սալահատակների հարաբերակցությունը:Վաղբրոնզիդարյան սալահատակի տակ գտնվեցին միջինբրոնզիդարյան անոթներ, պեղավայրի հյուսիսային եզրում՝ վաղ բրոնզի դարաշրջանի առաջին փուլի մի քանի խեցիներ:* Սակայն ինչպես վաղբրոնզիդարի առաջին փուլի, այնպես էլ միջինբրոնզիդարյան շերտեր չկան: Պեղումներով փաստվեց նաև, որ Մեծ Սեպասարի վաղբրոնզիդարյան բնակավայրը միջին բրոնզի դարաշրջանում վեր է ածվել դամբարանադաշտի:

РАСКОПКИ с. МЕЦ СЕПАСАР В 2006 г.

___ *Резюме* ___ ___ *Л. Еганян* ___

В 2006 году продолжались раскопки многослойного поселения Мец Сепасар.

В результате раскопок частично открыто святилище, уточнены соотношения стен средневековых и раннебронзовых помещений. Особый интерес представляет жертвоприношение волков, найденное глинобитном полу святилища. Корни ритуала жертвоприношения волков мы находим в индоевропейских традициях, что имеет очень важную роль для установления и уточнения племен, населявших Мец Сепасар в III тыс. до н.э.

Открытое под полом помещения III тыс. до н.э. погребение эпохи средней бронзы показывает, что после прекращения существования поселения во II тыс. до н.э. на месте поселения возник некрополь .

Археологический материал из раскопок Мец Сепасар богат и разнообразен: керамика, предметы из бронзы, кремня, кости, обсидиана и т.д., Богат и разнообразен также остеологический материал: лошадь, волк, собака, свинья, бык/корова, овцы/козы, куница. Наличие в остеологическом материале костей лошади представляется важным в изучении вопроса по одомашниванию лошади.

Археологическое изучение памятника дает новые дополнительные ценные сведения по материальной и духовной культуре Ширака.

---

[3] *Т. Гамкрелидзе, Вяч. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тб. 1994, т. II, стр.893-894.*

[4] *Լ. Եգանյան, նշվ. աշխ., էջ 21:*

* *Խեցեղենի վերականգնումը կատարվել է Շիրակի երկրագիտական բանգարանում. վերականգնող նկարիչներ՝ Հ. Ավետիսյան, Ռ. Մարգսյան, տախտակները՝ Վ. Թոփչյանի:*